ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

# Երվանդ Ա Սակավակյաց

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

| Երվանդ Ա Սակավակյաց | |
|---|---|
| **Տոհմ** | Երվանդունիներ միապետ |
| **Երեխաներ** | Տիգրան Երվանդյան |

**Երվանդ Ա Սակավակյաց** (ծն. և մահվան թթ. անհայտ), Հայոց թագավոր մ.թ.ա. 570-560-ական թվականներին: Երվանդի մասին ավանդախառն տեղեկություններ են հաղորդում Մովսես Խորենացին և Քսենոփոնը: Խորենացին նրան անվանում է «Սակավակյաց»՝ նկատի ունենալով նրա թագավորելու կարճատևությունը: Ինչպես նշում է Քսենոփոնը, Երվանդն ունեցել է ընդարձակ տիրապետություն, շուրջ 3000 արծաթ տաղանդ հարստություն, 40 հազար հետևակային և 8 հազար հեծելակային զինվորական ուժ: Երվանդն իր արքունիքը շրջապատել է հայ ավագանու ներկայացուցիչներով՝ «պատվավոր հայերով»: Ելնելով Երվանդունիք գավառի տեղադրությունից՝ ուսումնասիրողները ենթադրում են, որ Երվանդի օրոք հայկական թագավորության մայրաքաղաքը եղել է Տուշպա-Վանը: Մ.թ.ա. 585-550 թվականներին Աժդահակ թագավորի դեմ կռվում պարտվելով՝ Երվանդը ճանաչել է նրա գերիշխանությունը, վճարել տարեկան 50 տաղանդ հարկ, հայկական զորամասերով մասնակցել Մարաց արշավանքներին: Սակայն, երբ Աժդահակը պատերազմի է դուրս եկել Բաբելոնիայի դեմ, Երվանդը հրաժարվել է մասնակցել: Մարաստանի զորքերի գլխավոր հրամանատար Կյուրոս Աքեմենյանը ներխուժել է Հայաստան, կալանավորել Երվանդին և նրա ընտանիքին: Երվանդի գահաժառանգ որդի Տիգրանի միջնորդությամբ կնքվել է նոր հաշտություն. Երվանդը վերստին ճանաչել է Աժդահակի գերիշխանությունը, տարեկան վճարել 100 տաղանդ հարկ, պարտավորվել զորքի կես մասով մասնակցել արշավանքներին: Ըստ ավանդական պատմության, Երվանդի որդիներն էին Տիգրանը և Տավարշը, իսկ դուստր Տիգրանուհուն կնության էին տվել Աժդահակին: Հետագայում հայկական ուժերը մեծապես օժանդակում են Կյուրոս Մեծին գրավել Մարաստանը: «Կյուրոպեդիա» աշխատությունից տեղեկանում ենք, որ Հայաստանից մարերի դեմ կռվին մասնակցել են 20 հազար հեծելազոր և 4 հազար հետևակ: Մարաստանի դեմ Երվանդի և նրա որդի Տիգրանի պայքարը արտացոլվել է հին հայկական բանահյուսության մեջ, որից պահպանվել են պատառիկներ:

*Այս հոդվածի կամ նրա բաժնի որոշակի հատվածի սկզբնական կամ ներկայիս տարբերակը վերցված է Քրիեյթիվ Քոմմոնս Նշում–Համանման տարածում 3.0 (Creative Commons BY-SA 3.0) ազատ թույլատրագրով թողարկված Հայկական սովետական հանրագիտարանից (հ. 3, էջ 638):* BY-SA

ԴՔՆ(https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81_%D5%A1%D6%80%D6%84%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) Հայոց արքաներ [Բացել]

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Երվանդ_Ա_Սակավակյաց&oldid=8684482» էջից